ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 38-Լ

«28» 04 2023 թ. գ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 26-Ի N 42 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազի տեղակալ, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի անդամ Հովհաննես Քոչարյանին զբաղեցրած պաշտոնից ազատելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ 2023 թվականի ապրիլի 28-ի N 171-Ա հրամանը, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ մասով, 23-րդ հոդվածի 3-րդ, 5-րդ, 6-րդ և 6.1-ին մասերով,

Հ ր ա մ ա յ ու մ ե մ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի անդամ Հովհաննես Քոչարյանի լիազորությունները համարել դադարած:

2. Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության ավագ դատախազ Կարեն Հարությունյանին նշանակել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի անդամ՝ 3 տարի ժամկետով:

3. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի

կազմը հաստատելու մասին» 2021 թվականի ապրիլի 26-ի N 42 հրամանի 1-ին կետում՝

«**Հովհաննես Քոչարյան** - Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազի տեղակալ»

տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«**Կարեն Հարությունյան** - Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության ավագ դատախազ»:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

5.Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

6.Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, ավագ դատախազներին և դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

Ա. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ